ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2026 թվականի N 363 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 5-Ի N 21-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 5-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՄԵՏԱԼ ՈՒՈՐԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 21-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ» աղյուսակը 12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13-17-րդ կետերով.

«

13.	8462330000	Թվային կառավարմամբ հոսքագիծ՝ մետաղե հարթ թիթեղների ձևածքային կտրման համար Մոդել՝ HL1200BS3	Արտադրական գիծը նախատեսված է մետաղե հարթ թիթեղների ձևածքային կտրման համար	հատ	1	Չինաստան	Չինաստան	200 000 000	
14.	8458190000	Խառատային հորիզոնական հաստոց, մեխանիկական կառա-վարմամբ CA6136 մոդելի	Խառատային հորիզոնական հաստոց, մեխանիկական կառավարմամբ CA6136 մոդելի	հատ	1	Չինաստան	Չինաստան	4 000 000	
15.	8460129009	Մետաղների հարթահղկման հաստոց՝ թվային կառավարմամբ MY3060 մոդելի	Մետաղների հարթահղկման հաստոց՝ թվային կառավարմամբ MY3060 մոդելի	հատ	1	Չինաստան	Չինաստան	4 000 000	
16.	8459590000	Բարձակա-ֆրեզերային հաստոց՝ մեխա-նիկական կառավար-մամբ, H4 մոդելի	Բարձակա-ֆրեզերային հաստոց՝ մեխանիկական կառավարմամբ, H4 մոդելի	հատ	1	Չինաստան	Չինաստան	3 000 000	
17.	8462900099	Հիդրավլիկ մամլիչ, տարբեր նյութերից պատրաստված արտադրատեսակների մշակման համար, մեխանիկական կառա-վարմամբ Y81-30 մոդելի	Հիդրավլիկ մամլիչ, տարբեր նյութերից պատրաստված արտադրատեսակների մշակման համար, մեխանիկական կառավարմամբ Y81-30 մոդելի	հատ	1	Չինաստան	Չինաստան	1 500 000	

».

2) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «49 986 000 000» թիվը փոխարինել «50 198 500 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ